

ՍԻՐՏ-ԱՆՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՍԻՐՏ-ԱՆՈՒԹԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐՈՎ ՏԱՌԱՊՈՂ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԵՏԱԲՈԼԻԿ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԸ, ՍՆՆԴԻ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ՍՆՆԴԱԿԱՐԳԸ

Ֆազելի Մողադամ. Է.

*Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի
հասարակական առողջապահության բաժանմունք, Երևան, Հայաստան*

Դրդապատճառները

Ներկայումս աշխարհում սրտային հիվանդությունները և կաթվածները կազմում են մահացության ամենաբարձր տոկոսը: Սիրտ-անոթային հիվանդությունների հետևանքով առաջացած մահացության մեջ իրենց որոշակի տեղն են զբաղեցնում տարիքային, սեռային և ռասային օրինաչափությունները: Բազմաթիվ երկրներում գիրության և մետաբոլիկ համախտանիշի զարգացման արագ տեմպերը մեծ վնաս են հասցնում մարդկանց առողջությանը, բարձրացնում մահացության մակարդակը, հաշմանդամությունը և նպաստում սրտային հիվանդությունների առաջացմանը: Դիետաների որոշ տեսակներ լուրջ վնաս են հասցնում առողջությանը՝ առաջացնելով գիրություն, ճարպակալում, սթրես, շաքարախտ, սիրտ-անոթային հիվանդություններ, նույնիսկ՝ քաղցկեղի որոշ տեսակներ: Այս հետազոտության նպատակն է՝ ներկայացնել Երևանի բժշկական կենտրոններ հաճախող սիրտ-անոթային և ոչ սիրտ-անոթային հիվանդություններով տառապող հիվանդների մետաբոլիկ համախտանիշի, դիետաներին հետևելու և սննդակարգի միջև եղած փոխհարաբերությունները:

Նյութեր և մեթոդներ

Սույն հետազոտությունն անցկացվում է հիվանդանոցների և պոլիկլինիկաների հիվանդների շրջանում, Երևանի պետական բժշկական համալսարանի կլինիկաներ հաճախող պացիենտների միջև: Դիետաներին հետևումը գնահատվում է սննդի ընդունման հաճախականությունը պարզող կիսաքանակական հարցաթերթիկների միջոցով: Անտրոպոմետրիկ ինդեքսները, սննդակարգն ու արյան ճնշման ցուցանիշները ներառվում են ընդհանուր հարցաթերթիկի մեջ: 640 հիվանդներից ստացված տվյալները ուսումնասիրում են համապատասխան պարամետրիկ և ոչ պարամետրիկ թեստերի միջոցով: Վիճակագրական արդյունքների վերլուծության համար օգտագործվում են ժամանակակից ծրագրեր:

Արդյունքներ

Քանի որ այս հետազոտությունն իր տեսակով առաջինն է և տվյալ նյութի վերաբերյալ ոչ մի տեղեկատվություն չկա Հայաստանում, ուստի ներկայացվող աշխատանքի արդյունքները խթան կհանդիսանան առողջապահական ռազմավարության վերաբերյալ հասարակական իրազեկության ծրագրերի ստեղծմանը, մետաբոլիկ համախտանիշի և սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելիչ միջոցների զարգացմանը, ռիսկի անհատական գործոնների և սիրտ-անոթային հիվանդությունների միջև եղած կապի բացահայտմանը:

Տվյալ հաղորդագրությունը հանդիսանում է մեր հետազոտության առաջին բացահայտումը: Արդյունքները կնպաստեն առողջապահական հարցերի որոշմանը՝ մետաբոլիկ համախտանիշի և սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ իրազեկության բարձրացման ծրագրերի կատարման ժամանակ: